



Մայիսի 6-7-ը Էջմիածնի Գեղակերտ համայնքում անցկացվեց ծանրամարտի << Սևան>> մարզական ընկերության հանրապետական խորհրդի բաց առաջնություն,

որտեղ մասնակցեցին նաև Տափերականի մանկապատանեկան մարզադպրոցի սաներ՝ Ալբերտ Հակոբյանը, Գագիկ Միսակյանը, Սամվել Հակոբյանը, Լևոն Խաչատրյանը, Արման Արսենյանը, Արսեն Լևոնյանը, Արամ Մաթևոսյանը, Նարեկ Գուլաբյանը, Ալբերտ Ալեքսանյանը, Հարություն Հարությունյանը և Նշան Հակոբյանը:

Սամվել Հակոբյանը 40կգ քաշային կարգում ցույց տվեց 105 կգ արդյունք երկամարտում և ընդամենը 2 կգ-ով պարտվեց հաղթողին:

Ալբերտ Ալեքսանյանը 121 կգ երկամարտի արդյունքում գրավեց 3-րդ մրցանակային տեղը:

Թիմի արդյունքները ընդհանուր առմամբ գոհացնող են, ծանրորդներին մաղթում ենք հետագա հաջողություններ ավելի ներկայացուցչական մրցահարթակներում:









